

## ԵՎՐԱՍՏԼԱՆՏՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿԵՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՆԵՐԻ ՇՈՒՋ

### Ղ. Ա. ՀԱՄԲԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես Հարավային Կովկասի կարևորագույն դերակատարում ունեցող պետություններից մեկը, իր անկախացումից ի վեր բազմակողմանի համագործակցություն է ծավալել միջազգային ասպարեզում: ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթ ուղղություններից մեկը համարվում է եվրաստլանտյան տարածաշրջանի երկրների հետ հարաբերությունների խորացումը և Հյուսիսատլանտյան դաշինքի հետ համագործակցության ընդլայնումը: Այս ենթատեքստում եվրաստլանտյան համագործակցության ներկա վիճակի և նրա զարգացման միտումների ուսումնասիրությունը կարևոր է և անհրաժեշտ:

Եվրաստլանտյան տարածաշրջանը արդի միջազգային հարաբերությունների կառուցման ամենանշանակալի թատերաբեմերից է: Բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցությամբ համագործակցությունը եվրաստլանտյան շրջանակներում մեծ փոփոխությունների է ենթարկվում՝ ազդելով հարաբերությունների հետագա զարգացման միտումների վրա: Այդ հարաբերությունների կառուցվածքային, առարկայական արտացոլումը հանդիսացող Հյուսիսատլանտյան դաշինքը (ՆԱՏՕ) նույնպես գտնվում է վերափոխման, նոր որակի ձեռքբերման փուլում:

Հյուսիսատլանտյան դաշինքի դերի վերաբերյալ տեսակետների փոփոխություններով են պայմանավորված եվրաստլանտյան համագործակցության ներկա անհանգիստ վիճակը և հեռանկարները:

Դաշինքի ներսում հարաբերություններն այսօր անհամաչափ են զարգանում: Հզոր Միացյալ Նահանգները այդ համագործակցության շրջանակներում գործ ունի սեփական դերն ու ինքնությունը հաստատելու ճանապարհին գտնվող Եվրոպայի հետ: Անհրաժեշտություն է առաջացել մշակելու միասնական մոտեցում գլոբալ խնդիրների լուծման հարցում, որը հնարավոր է միայն այն դեպքում, եթե այսօրվա եվրաստլանտյան դաշնակիցները իրերին նայեն միևնույն ոսպնյակի միջով: Եվրոպան կանգնած է երկրներանքի առջև. կա՛մ հաշտվել ԱՄՆ-ի գերազանցության հետ, կա՛մ մշակել սեփական անկախ ռազմաքաղաքական ուղի՝ գիտակցելով, սակայն, որ դա տանելու է եվրաստլանտյան համագործակցության թուլացմանը:

2001 թվականի սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո Եվրոպան իրեն դրսևորեց որպես Միացյալ Նահանգների նվիրյալ դաշնակից: Հյուսիսատլանտյան դաշինքն առանց տատանվելու գործի դրեց պայմանագրի 5-րդ հոդվածը՝ հայտարարելով, որ ահաբեկչական գործները ուղղված են եղել ոչ միայն Նյու-Յորքի և Վաշինգտոնի, այլև ողջ ազատ և դեմոկրատական Արևմուտքի դեմ: Ահաբեկչության դեմ մղվող պայքարը Արևմուտքի անվտանգության ապահովման օրակարգի կարևորագույն կետն է: Սեպտեմբերի 11-ի հաջորդ օրը Եվրոպական Միությունը հայտարարեց. «Եվրոպայի պատմության ամենադժգույն օրերին ամերիկացիները կանգնած են եղել մեր կողքին: Այսօր մենք ենք ուսի կանգնում նրանց կողքին»<sup>1</sup>: Ողջ ուշադրությունը կենտրոնացվեց Արևմտյան քաղաքակրթական արժեքներին ձեռնոց նետած ընդհանուր թշնամու դեմ պայքարին, որը

<sup>1</sup> Հոդվածում ասված է, որ Եվրոպայում կամ Հյուսիսային Ամերիկայում դաշինքի մեկ կամ մի քանի անդամների դեմ հարձակումը համարվում է ոտնձգություն ողջ դաշինքի նկատմամբ, որը համառոտ ռազմական ուժի կիրառում է նախատեսում (տե՛ս «The North Atlantic Treaty», Washington, D.C. 4 april 1949, art. 5):

<sup>1</sup> Տե՛ս «Заявление о нападениях на Соединенные Штаты», Брюссель, 12 сентября 2001:

սկզբնական շրջանում բավականին հուզական երանգներ էր կրում: Հետաառաջատերազմ-  
յան ժամանակաշրջանը, հատկապես XXI դարակիրըը նշանավորվեց ահաբեկչության  
դեմ մղվող պայքարով: Շրջանառվում էր այն գաղափարը, որ այդ պայքարում առաջա-  
տար դեր կարող է խաղալ ՆԱՏՕ-ն՝ որպես եվրատախանայան համագործակցության կա-  
ռուցվածքային հենք:

Այդ մասին հստակ արտահայտվեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար լորդ Ռոբերտ-  
սոնը. «Աշխարհի ամենախոշոր և արդյունավետ դաշինքը կենտրոնական դեր է խաղալու  
ահաբեկչության դեմ ուղղված միջազգային հանրության գործողությունների համատեքս-  
տում ինչպես ներկայում, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում»<sup>2</sup>: Ռոբերտսոնը ընդ-  
գծեց նաև, որ Եվրոպական Միության (ԵՄ) անվտանգության և պաշտպանության քաղա-  
քական իրադրությունները գտնվում են իրենց զարգացման նախնական փուլում միայն, իսկ  
ՄԱԿ-ը և ԵԱՀԿ-ն չունեն ՆԱՏՕ-ի կազմակերպվածությունը, հզորությունն ու արձա-  
գաճման արագությունը:

Իհարկե, ի սկզբանե ռազմական ոլորտում մասնագիտացած կառույցը պետք է վերը  
նշված հատկանիշներով գերազանցի սկզբունքորեն այլ առաքելություն ունեցող ՄԱԿ-ին  
և ԵԱՀԿ-ին, սակայն խնդիրն այն է, որ ՆԱՏՕ-ի «Ավաքս» ինքնաթիռները ահաբեկչու-  
թյան դեմ արդյունավետ պայքարի առաջնահերթ նախապայմանները չեն: Մյուս կողմից՝  
նույն Հյուսիսատլանտյան դաշինքի անդամների միջև կան տարաձայնություններ ահա-  
բեկչության դեմ պայքարի ձևերի, սեփական անվտանգության ապահովման և այդ ենթա-  
տեքստում ՆԱՏՕ-ի դերի և նշանակության վերաբերյալ: Մեխտենբերի 11-ին հաջորդած  
միասնականությունը և աշխարհի բազմաթիվ երկրների կողմից ԱՄՆ-ին գորակցելու  
պատրաստակամությունը ոգևորող էին և հուսադրող ընդհանուր թշնամու դեմ «խաչակ-  
րաց» արշավանք հայտարարելու համար: Կար այն համոզմունքը, որ Եվրոպան, ԱՄՆ-ը  
և ընդհանրապես համաշխարհային հանրությունը համակարծիք են պայքարի կազմա-  
կերպման մեթոդների և դրանց իրականացման մեխանիզմների ընտրության հարցում:  
ԱՄՆ-ը հույս ուներ, որ ՆԱՏՕ-ի անդամ պետությունները վճռականորեն իր կողքին  
կկանգնեն: Սակայն նախ աֆղանական պատերազմը, այնուհետև դրան հաջորդած իրա-  
դարձությունները ցույց տվեցին գործելակերպի և հետագա անելիքների մասին դաշնա-  
կիցների պատկերացումների տարբերությունը: ԱՄՆ-ի դիրքորոշումը միանշանակ և  
հաստատակամորեն կիսում է միայն Լոնդոնը: Հակառակ իր սպասումների՝ Վաշինգտո-  
նը պարզեց, որ Եվրոպայում քչերն են հակված իրական ռազմական գործողությունների  
և հենց այն իրավիճակում, երբ դրանք կենսական նշանակություն են ձեռք բերել իր հա-  
մար: Մեծ Բրիտանիան միշտ եղել է Միացյալ Նահանգների համախոհը, սակայն միայն  
այդ երկիրը ի գորու չէ ձևավորել և ապահովել ծրագրված գործողությունների համար  
պահանջվող մթնոլորտը: Իսկ դա չափազանց անհրաժեշտ է Միացյալ Նահանգներին:  
Այս համատեքստում ԱՄՆ-ը Արևելյան Եվրոպային է դիտում այն դաշտը, որը կարող է  
հակակշռել և չեղոքացնել Ռին Եվրոպայից հաճախակի լսվող անհամաձայնությունները:

Միևնույն ժամանակ հատկապես Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներն  
ունեն այն մտավախությունը, որ եթե Եվրոպական հանրությանը (Եվրոպական Միությա-  
նը) և ՆԱՏՕ-ին անդամակցությունը շուտափույթ չիրականացվի, ապա իրենք կարող են  
վերադառնալ այն նույն կարգավիճակին, որում գտնվել են տասնամյակներ շարունակ՝  
լինելով բուֆերային գոտի Արևելքի և Արևմուտքի միջև: Նման կարգավիճակում այդ եր-  
կրները կգտնվեն անվտանգության այնպիսի մի միջավայրի մեջ, որտեղ նրանք ուղղա-  
կիր են չեն լինի ռուսական ազդեցության գոտում, բայց և մտն չեն գտնվի Արևմուտքին:  
Իսկ այդպիսի լուսանցքային (marginal) վիճակը ամենևին էլ ձեռնադր չէ այդ երկրներին և  
նրանց կապի մշտական անորոշության մեջ<sup>3</sup>:

Միացյալ Նահանգները մեծապես նպաստում է, որ արհեստականորեն արագացվի  
արևելաեվրոպական երկրների մուտքը ՆԱՏՕ: Պրահայի 2002 թ. և Ստամբուլի 2004 թ.

<sup>2</sup> Lord Robertson. Attack on us all, NATO s Response to terrorism, Atlantic Council of the United States, Washington DC, October 10, 2001.

<sup>3</sup> Տե՛ս «Central and Eastern Europe: The Challenge of Transition. Stockholm International Peace Research Institute». Edited by Regina Cower Karp. Stockholm, Sweden, 1993, էջ 7:

ՆԱՏՕ-ի զուգաթափողովների միջև ընկած ժամանակահատվածում Արևելյան Եվրոպայի ևս 7 երկրներ անդամակցեցին դաշինքին<sup>6</sup>: Վերջիններին անդամակցության գործընթացն իրականացվեց պարզեցված տարբերակով, որը նշանակում էր առաջին հերթին նազմական ոլորտում անդամությունը նախորդող միջոցառումների և ծրագրերի իրականացման ոչ շատ բարձր չափորոշիչների սահմանում (սակայն, հարկ է նշել նաև, որ նրանք մասնակցեցին Հարավարևելյան Եվրոպայում ՆԱՏՕ-ի կողմից իրականացվող SFOR և KFOR խաղաղարարական առաքելություններին): Դաշինքի նոր անդամներին իրաքյան պատերազմում ներգրավելը արդեն իսկ Վաշինգտոնի կողմից նրանց նշանակության ընդգծումն էր:

Առավել ակնհայտորեն դա արտահայտվեց Լեհաստանի պարագայում: Ամերիկյան զորքերի կողմից Իրաք ներխուժելու պահին Լեհաստանը նոր էր անդամակցել ՆԱՏՕ-ին: Կվաշնևսկու խոսքերով. «Եթե նախագահ Բուշը գտնում է, որ Իրաք ներխուժելը անհրաժեշտ է, ապա ես էլ եմ կարծում, որ անհրաժեշտ է»<sup>7</sup>:

Նույն անվերապահ ենթարկվածությունը զգացվեց նաև ութ եվրոպական երկրների կողմից ստորագրված «Ութի նամակ»-ում, որոնց թվում էին Լեհաստանը, Հունգարիան և Չեխիան, ինչպես նաև «Տասի հռչակագրում», որը ստորագրեցին արևելաեվրոպական տասը երկրների ղեկավարներ՝ Էստոնիայից մինչև Ալբանիա: Ինչպես հայտնի է, 10 օր անց Ֆրանսիայի նախագահ Օրիակը հրապարակայնորեն պարսավեց այս երկրներին՝ հայտարարելով, որ նրանք գերազանց հնարավորություն ունեին լռելու, որից չօգտվեցին: Օրիակի խոսքերով՝ նրանք իրենց պահեցին ինչպես անդաստիարակ երեխաներ և դրանով հարցականի տակ դրեցին Եվրամիությանը իրենց անդամակցության հարցը:

Այս երկրների վարքագիծը, սակայն, չի կարելի մեկնաբանել դաստիարակության պակասով: Այն նաև չի կարելի բացատրել միայն ամերիկացիների նկատմամբ ավելորդ երախտագիտությամբ կամ Վաշինգտոնի ճնշմամբ:

Եթե Արևելյան Եվրոպայի երկրները իրենց անվերապահ պատրաստակամությունն են հայտնել պաշտպանելու Միացյալ Նահանգների քաղաքականությունը՝ չվախենալով անգամ կորցնել իրենց դերը Եվրամիության որոշ երկրների աչքում, ուրեմն այդպիսի վճռականության շարժառիթը բավականին ծանրակշիռ է: Դա առաջին հերթին «նուսական սպառնալիքի հանդեպ» մտավախությունն է: Թեև ներկայումս կրեմլը չունի որևէ նվաճողական ծրագիր, սակայն Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի անհամատեղելիությունը բոլոր առումներով հսկայական է, և պատմական հիշողությունը դեռևս թարմ է, որպեսզի այդ երկրները իրենց ապահով գզան<sup>8</sup>:

Արևելաեվրոպական երկրները սեփական փորձով գիտեն, թե ինչ է նշանակում ռուսական իշխանությունը: Նրանք ենթարկվել են Ռուսաստանին խորհրդային իշխանության օրոք, իսկ նմանք, ինչպես օրինակ Լեհաստանը, էլ ավելի վաղ ժամանակներից: Մտահոգությունն այն է, որ անմիջական վտանգի դեպքում ով կարող է հուսալիորեն պաշտպանել իրենց՝ ամերիկյան բանակը, թե՛ գերմանա-ֆրանսիական ուժերը: Պատասխանը Միացյալ Նահանգների օգտին է, քանի որ արևելաեվրոպական երկրները, թե՛ առանձին-առանձին և թե՛ միասին, չեն կարող ապահովել իրենց անվտանգությունը:

Նույն Եվրոպայում անվտանգության վերաբերյալ մոտեցումները դեռևս հեռու են միասնական լինելուց: Մի մոտեցումը սեփական անվտանգությունը ԱՄՆ-ին վստահելն է (արևելաեվրոպական երկրների օրինակը), մյուսը՝ ԱՄՆ-ի հովանավորությունից հրաժարվել՝ չփնտրելով այլ հովանավոր: Նման դիրքորոշում ունեն չեզոք երկրները, ինչպես Ավստրիան և Շվեյցարիան: Կա նաև երրորդ տարբերակը. Եվրոպական Միությունը վերածել այնպիսի կառույցի, որը կմասնակցի անվտանգության և հավասարակշռության պահպանմանը:

<sup>6</sup> Սառը պատերազմի ավարտից հետո դաշինքին առաջինն անդամակցեցին եվրոպական երեք երկրներ՝ Չեխիան, Հունգարիան և Լեհաստանը: Իսկ 2004-ին դրանց միացան ևս 7-ը՝ Բուլղարիան, Ռումինիան, Սլովակիան, Սլովենիան, Լատվիան, Լիտվան, Էստոնիան:

<sup>7</sup> «International Herald Tribune», January 24, 2003.

<sup>8</sup> Տե՛ս «Политический журнал», М., 2004, № 2, էջ 42-45:

Այս զարգացումների լույսի ներքո տարածայնություններ են ի հայտ գալիս մի կողմից Եվրոպական Միության սահմանների ընդլայնման, նրա ռազմական ներուժի կազմավորման շուրջ, մյուս կողմից՝ ԵՄ-ՆԱՏՕ հարաբերություններում հնարավոր հավասարակշռությունը պահպանելու վերաբերյալ: Այսօր արդեն կանխատեսելի է, որ ԵՄ-ն կարող է գերհզոր ուժի վերածվել, որը ի վիճակի կլինի մրցակցել իր ավանդական դաշնակցի՝ Միացյալ Նահանգների հետ: Մենք ապրում ենք ազգային պետությունների էգոիզմի մրցակցության պայմաններում, և ԵՄ դերի հզորացումը կախված է այն բանից, թե նա ինչքանով կկարողանա հաղթահարել ազգայնական ձգտումները իր ներսում և ինչպես կարող է կառուցել իր հարաբերությունները ԱՄՆ-ի, հետևաբար նաև՝ ՆԱՏՕ-ի հետ:

Առաջին կարևոր քայլը այս ուղղությամբ կատարված է: 2003 թ. դեկտեմբերին Բրյուսելում 25 եվրոպական երկրների կողմից նախաձեռնվեց ինքնուրույն համաեվրոպական գլխավոր շտաբի ստեղծումը, որը պիտի ղեկավարի ռազմական գործողությունները ՆԱՏՕ-ի շրջանակներից դուրս: Քանի որ նման պաշտպանական համակարգը կարող է անիմաստ համարվել, եթե չհստակեցվի, թե որ դեպքերում է այն գործի դրվելու, ապա առաջին անգամ որոշակիացվեցին հնարավոր սպառնալիքները Եվրոպայի անվտանգության ռազմավարության ծրագրում:

Նույն սեպտեմբերի 11-ը ապացուցեց, որ Եվրոպան դեռ երկար ճանապարհ ունի անցնելու, մինչև ձեռք բերի իրական կշիռ՝ որպես ռազմական միջազգային սուբյեկտ: Այնհայտ է, որ առաջիկայում եվրոպացիներին շատ դժվար է լինելու իրական ռազմական մասնակցություն ունենալ կամ դեր խաղալ ահաբեկչության դեմ վաշիճատոնի նախաձեռնություններում:

ԱՄՆ-ի արագ հաղթանակը Աֆղանստանում ապացուցեց, որ ռազմական ուժերի գերազանցությունը ամուր հիմք է սեփական աշխարհաքաղաքական շահերի իրականացման և սեփական պատկերացումներին համապատասխան ազդեցության տարածման ու անվտանգության ապահովման համար: Սա արդեն հավակնում է վտանգավոր նախադեպ լինել: Ահաբեկչության դեմ պայքարի պատճառաբանությամբ և անհամոզիչ հիմնավորումներով կարելի է հարվածել, օրինակ, Հյուսիսային Կորեային, այնուհետ՝ Իրանին և այլն՝ առաջնորդվելով համաշխարհային տիրապետության մասին ատլանտիստների հավակնոտ ծրագրերով:

Այնքան էլ հստակ չէր ՆԱՏՕ-ի դերը (թե՛ Աֆղանստանում և թե՛ Իրաքում) հարվածների նախապատրաստման և իրականացման գործում: Մի կողմից ԱՄՆ-ին անհրաժեշտ էր դաշինքի աջակցությունը՝ իր գործողություններին քիչ թե շատ լեգիտիմ բնույթ հաղորդելու համար, մյուս կողմից ամերիկյան ղեկավարությունը հայտարարում է, թե Հյուսիսատլանտյան դաշինքի մասնակցությունը Իրաքի պատերազմին բավարար չէ: Դրանով փորձ է արվում նվազեցնել դաշինքի ռազմական նշանակությունը: Մեկ բան պարզ է. Իրաքի դեմ ծավալված արշավը չի համապատասխանում եվրատլանտյան համագործակցության ընդհանուր շահերին: Ավելին, առանձին անդամներ սկզբունքորեն դեմ էին դրան: Դաշինքի գոյության 54 տարիների ընթացքում առաջին անգամ ԱՄՆ-ի ու Եվրոպայի շահերը երկփեղկվում են:

Կրքերի բորբոքման ձևական ատիթ հանդիսացավ նաև Թուրքիայի պահանջի մերժումը, որով նա խնդրում էր ՆԱՏՕ-ից իր հակահրթիռային պաշտպանական համակարգի կատարելագործումը՝ Իրաքի հնարավոր հարձակմանը դիմակայելու համար: Ի վերջո Միացյալ Նահանգների ճնշմամբ այդ որոշումն ընդունվեց, իսկ ընդվզողները՝ Ֆրանսիան, Գերմանիան, Բելգիան, չցանկացան գործը հասցնել ճգնաժամի: 2003-ի փետրվարի 24-ին ՆԱՏՕ-ի հետավոր ռադիոտեղորոշման առաջին ինքնաթիռները արևմտագերմանական ավիահանգրվանից ուղևորվեցին Թուրքիա: Դրանք տեղակայվեցին Անկարայից 220 կմ հարավ գտնվող թուրքական ավիահանգրվանում Թուրքիայի օդային տարածքը հսկելու նպատակով:

«Սոսքը ՆԱՏՕ-ի ճգնաժամի մասին չէ, ուղղակի ջրի երես են դուրս ելել ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի միջև կուտակված հակասությունները»<sup>6</sup>, այսպես է բնորոշել իրերի դրությունը ՌԴ նախկին արտգործնախարար և վարչապետ Ծ. Պրիմակովը:

<sup>6</sup> «Аргументы и факты», 2003, № 8.

ԱՄՆ-ը անտեսում է իր եվրասիականության դաշնակիցների կարծիքները, եթե դրանք փոքր-ինչ քննադատական են. պաշտպանության քարտուղար Ռ. Ռամսֆելդի բնորոշմամբ՝ դրանք «ծեր Եվրոպայից» լսվող միթմթոցներ են: Եվրոպայում շատերն են հասկանում, որ ԱՄՆ-ի հետ «խաղաղ» հակամարտությունը խորանալու միտումներ ունի: Գերմանիան ու Ֆրանսիան վտանգում են այսպես կոչված ատլանտյան համերաշխությունը, որը ոչ միայն ՆԱՏՕ-ի հիմքն է եղել, այլ նաև երկրորդ աշխարհամարտից հետո ձևավորված գլոբալ հավասարակշռության ապահովման գործոն է: Այս համատեքստում հատկանշական է Միացյալ Նահանգներում մեծ հեղինակություն վայելող ատլանտիզմի ներկայացուցիչ Ջ. Բժեզինսկու մտածելուը ՆԱՏՕ-ին և ընդհանրապես դաշինքի զաղափարին. Հյուսիսատլանտյան դաշինքը Եվրոպայի առավել զարգացած և ազդեցիկ պետությունները կապում է ԱՄՆ-ի հետ՝ հնարավորություն ընձեռելով Միացյալ Նահանգներին գլխավոր դերակատարություն ունենալու ներեվրոպական շատ գործերում: Անգամ նախկին խորհրդային տարածքում մեծ ընդունելություն են գտել ամերիկացիների կողմից նյութապես ապահովվող այնպիսի ծրագրեր, որոնցից է ՆԱՏՕ-ի հետ ավելի սերտ համագործակցության կոչված «Գործընկերություն հանուն խաղաղության» հայտնի ծրագիրը<sup>7</sup>:

Այնհայտ է Եվրոպայի դժգոհությունը ԱՄՆ-ի բացարձակ լիզերության ձգտումների և այն մեթոդների կիրառման դեմ, որոնք օգտագործվում են վաշինգտոնի կողմից տնտեսական, քաղաքական ու ռազմական ոլորտներում գերիշխող դիրք գրավելու համար: Մենք ակնհայտ ենք, թե ինչպես ահաբեկչական գործերին հաջողորմ ժամանակաշրջանում Միացյալ Նահանգների նկատմամբ կարեկցանքի և համերաշխության այիքը իր տեղը գիշում է հակամերիկյան տրամադրություններին: Եվրոպական ամենատարբեր քաղաքական գործիչների շտաբերից հաճախակի են լսվում քննադատական խոսքեր: Եվրոպական հանձնաժողովի արտաքին կապերի պատասխանատու Ք. Պատենը 2002 թ. վերջին հայտարարել էր. «Չնայած ձեր ողջ հզորությանը, դուք չեք կարող միայնակ լուծել բոլոր խնդիրները, թեկուզև աշխարհի գերհզոր տերությունն եք: Ահաբեկչության դեմ մղվող պայքարում «խելացի» ռուսները կարևոր նշանակություն ունեն, սակայն զարգացմանը նպաստող խելացի ծրագրերը առավել կարևոր են»<sup>8</sup>: Նման քննադատական խոսքեր հնչել են հատկապես 2001-ի սեպտեմբերից հետո Ֆրանսիայի արտգործնախարար Վեդրենի և նրա գերմանացի գործընկեր Ֆիշերի կողմից:

Հետաառըպատերազմյան միջազգային հարաբերություններում առանձնացվում է նույն Ֆրանսիայի և Գերմանիայի քողարկված մտադրությունը՝ Արևմտաեվրոպական Միության (ԱԵՄ) նորովի վերակենդանացման և եվրոպական ռազմական ինքնության հաստատման ուղղությամբ: Քայլեր, որոնք հանդիպում են վաշինգտոնի հակազդեցությանը: Պետերսբերգյան հռչակագրի մեջ հստակորեն ասվում էր, որ ԱԵՄ-ին անհրաժեշտ ռազմական միավորումները կտրամադրվեն ԱԵՄ պետությունների կողմից, այդ թվում՝ ՆԱՏՕ-ին տրամադրվող ուժերի հաշվին՝ խորհրդակցելով ՆԱՏՕ-ի հետ: Այդ ուժերը կձևավորվեն բազմակողմ հիմքի վրա<sup>9</sup>:

Եթե Եվրոպան ցանկանում է միավորվել և ազատվել Միացյալ Նահանգների հովանավորությունից, պետք է առանց դրսի օգնության ի վիճակի լինի պաշտպանելու ինքն իրեն: Եթե նա փորձում է ապահովել ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Եվրոպայի երկրների անվտանգությունը, ապա պետք է տիրապետի բավարար քանակով զինված ուժերի և սպառազինության: Այդպիսի Եվրոպայի ստեղծման դեպքում ԵՄ կազմի մեջ մտնող պետություններից յուրաքանչյուրը որոշակիորեն զրկվում է իր ազգային ինքնությունից՝ փոխարենը ստանալով վստահություն սեփական անվտանգության նկատմամբ և կոլեկտիվ ինքնություն<sup>10</sup>:

Դիմադրության հանդիպելով հին Եվրոպայի կողմից՝ ԱՄՆ-ը փորձում է հնարավոր միջոցներով նախադեպ ստեղծել իր գործողությունների ազատության համար: Դա

<sup>7</sup> St' u 3. Бжезинский, Великая шахматная доска, М., 2002, էջ 40:

<sup>8</sup> «Единство запада и трансатлантическая безопасность - перед лицом испытаний». Публикация № 4. Центр им. Маршалла. Гармиш-Партенкирхен, 2002, с. 11.

<sup>9</sup> St' u «Appendix: Extract from the Petersburg Declaration», 19 June 1992, article 6:

<sup>10</sup> St' u «Политический журнал», М., 2004, № 2, էջ 45:

որոշակիորեն արտահայտվեց ԱՄՆ պաշտպանության մախարարի տեղակալ Պ. Վուլֆովիցի հայտարարության մեջ. «Առաքելությունը պետք է որոշի կոալիցիան, այլ ոչ թե հակառակը: Դրանից հետևում է, որ կստեղծվեն ոչ թե մեկ, այլ տարբեր կոալիցիաներ՝ տարբեր առաքելություններ իրականացնելու համար»<sup>11</sup>:

Այս գաղափարի իմաստը հետևյալն է. սկզբում դրվում է նպատակ, հետո միայն որոշվում է դրան արդյունավետորեն հասնելու համար անհրաժեշտ կոալիցիայի հարցը: Ամերիկյան այս մոտեցումը եվրաստրատեգիայի համագործակցության համար նշանակում է, որ ՆԱՏՕ-ն չի կարող մեկ միասնական կառույց համարվել առաքելության դեմ Արևմուտքի քաղաքականության համակարգման համար:

Մինևույն ժամանակ, եվրաստրատեգիայի համագործակցությանը և նրա հետանկարների մեծապես սպառնում է նաև այն ճեղքը, որն առաջանում է մի կողմից ԱՄՆ-ի, մյուս կողմից նրա դաշնակիցների և ողջ աշխարհի միջև սպառազինությունների որակի և կատարելագործման տեմպերի ասպարեզում:

Աֆղանական պատերազմը ցույց տվեց, թե ինչպիսին կարող են լինել վեցերորդ սերնդի պատերազմները: ԱՄՆ-ը Աֆղանստանում փորձարկեց ավելի քան 30 ռազմական նորամուծություններ, որոնց թվում էր անօդաչու «Պրեդատոր» ինքնաթիռը, որին հաջողվեց ոչնչացնել գրեթե բոլոր նպատակակետերը: Սա բոլորովին նոր էջ է բացում օդային հարվածների և ընդհանրապես մարտական գործողությունների վարման ասպարեզում: 2003-ի համար Բուշի վարչակազմի ընդունած ռազմական բյուջեն կազմում էր 379 մլրդ դոլար: Դա ռազմական ծախսերի ամենակտրոկ բարձրացումն է վերջին 20 տարում (ավելի քան 14%)<sup>12</sup>: Սրանով նվազում է Միացյալ Նահանգների կախվածությունը իր դաշնակիցներից այն դեպքերում, երբ պետք է «գործի անցնել»: Դաշնակիցների մասնակցությունը համարվում է ոչ նպատակահարմար, իսկ ռազմական տեսակետից դա կարող է նվազեցնել գործողությունների արդյունավետությունը:

Ռազմական կարողությունների պարզ տարբերությանը զումարվում է նաև այն, որ այդ կարողությունների կրողները սկսում են տարբեր մոտեցումներ դրսևորել աշխարհակարգի և գլոբալ խնդիրների նկատմամբ: Ամերիկացիները կողմնորոշված են դեպի անվերապահ հաղթանակը: Եվրոպական ստրատեգիական ժամանակակից մտածելակերպը ավելի շատ հակված է փոխզիջումների և խաղաղասիրության: Մյուս կողմից Ռուսաստանը հանդես է եկել և այժմ էլ քողարկված ու նրբորեն հանդես է գալիս ԱՄՆ-ի նկրտումների ու մտադրությունների դեմ:

Քլինթոնի վարչակարգի ժամանակները, երբ նա ձգտում էր բարեկամական հարաբերություններ պահպանել բոլորի, այդ թվում՝ եվրոպական դաշնակիցների հետ, անցել են: Հանրապետականները չցանկացան հանդուրժել Կոսովոյի կրկնությունը, երբ Միացյալ Նահանգների զինված ուժերը ստիպված էին գործել, այսպես ասած, կապված ձեռքերով և դեռ այդ ընթացքում էլ լսել քննադատություններ Հյուսիսատլանտյան խորհրդի կողմից:

ԱՄՆ-ը կարող է հենվել շատերի «կարեկցանքի» և բարի կամքի վրա (հատկապես առաքելական հարձակումներից հետո), սակայն հետզհետե ԱՄՆ-ին զգուշավոր են վերաբերում, որը առանձին դեպքերում վերածվում է բացահայտ անհամաձայնության: Այժմ հրապարակային հակադրությունը իր տեղը զիջել է անդրկուլիսյան դիվանագիտական պայքարին<sup>13</sup>:

<sup>11</sup> «Единство запада и трансатлантическая безопасность - перед лицом испытаний», с. 14.

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 13:

<sup>13</sup> ՆԱՏՕ-ի ստամբուլյան գագաթածողովին նախորդած ժամանակաշրջանը բնորոշվեց ԱՄՆ-ի և Ռիմնականոմ Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև լարված դիվանագիտական պայքարով: Խնդրո առարկան «Մեծ մերձավոր արևելք» ծրագիրը ՆԱՏՕ-ի ներգրավմամբ իրագործելու ԱՄՆ-ի նկրտումներն էին, ինչպես նաև դաշնակից երկրների կարծիքը ճշտելու նպատակով ծրագրի նախագիծը վերջիններիս ներկայացնելու՝ վաշինգտոնի գործելակերպը:

Ստամբուլյան նախորդած Մեծ ության կի գագաթածողովը նույնպես արձանագրեց Ֆրանսիայի, Գերմանիայի և Ռուսաստանի անհամաձայնությունը իրաքյան պատերազմին ՆԱՏՕ-ի լայնածավալ ընդգրկման ամերիկյան նախաձեռնությանը:

Այսպես կոչված «չարիքի առանցքի» երկրների դեմ ԱՄՆ-ի գլխավորությամբ հնարավոր ուղղված հարձակման հետևանքով մեծապես անհանգստացնում է նաև Ռուսաստանին: ՆԱՏՕ-ն հնարավորություն տվեց Մոսկվային ազդելու դաշինքի ներսում քաղաքականության մշակման վրա: 2001 թ. հոյեմբերին կայացած ՆԱՏՕ-ի զագաթածողովում Ռուսաստանի համար սերտ համագործակցության դուռ բացվեց: Գագաթածողովից առաջ Մեծ Բրիտանիայի վարչապետ Բլերը ՆԱՏՕ-ի իր գործընկերներին դիմեց խնդրանքով՝ բարձրացնել Ռուսաստանի դերը դաշինքում որպես հատուցում այն օգնության, որը նախագահ Պուտինը տրամադրեց Աֆղանստանում Ալ-Քաիդայի դեմ մղվող պայքարում: 2002 թ. մայիսին Ռեյկյավիկում կայացած ՆԱՏՕ-ի անդամ-պետությունների պաշտպանության նախարարների հանդիպման ժամանակ ՆԱՏՕ-ն և Ռուսաստանը համաձայնագիր ստորագրեցին ահաբեկչության և ընդհանուր անվտանգությանը սպառնացող այլ վտանգների դեմ համատեղ պայքարի վերաբերյալ: Խորհրդային արտաքին քաղաքականությունը միշտ փորձել է սեպ խրել Եվրոպա-ԱՄՆ հարաբերություններում: Նոր Ռուսաստանը այնքան էլ շահագրգռված չէ դրանում: Լուրջ ճգնաժամի ծագման դեպքում նրան դժվար կլինի ընտրություն կատարել ԱՄՆ-ի հետ գործընկերության և Ֆրանսիայի ու Գերմանիայի հետ ավանդական բարեկամության միջև: Ռուսաստանի ԱԳ նախկին նախարար Ի. Իվանովի խոսքերով՝ «Ռուսաստանը շահագրգռված է միասնական եվրաստլանդյան տարածքի պահպանման մեջ, քանի որ ինքը դարձել է նրա մի մասը»<sup>15</sup>: Ռուսաստանի աջակցությունը ցանկանում են ստանալ և անզուսաքսոնական կողմում (ԱՄՆ, ՄԲ) և հին Եվրոպայում (Ֆրանսիա, Գերմանիա): Դա ՌԴ-ին հնարավորություն է տալիս ներթափանցելու եվրոպական քաղաքականություն, սակայն կարճաժամկետ և խիստ որոշակի դեպքերում: Այդ հանգամանքը ի գործ է չեզոքացնելու Ռուսաստանի քողարկված դժգոհությունը ամերիկյան արտաքին քաղաքականությունից: Մասնավորապես, վերջին իրադարձությունների համապատկերում հարց է առաջանում. ի՞նչ անհրաժեշտություն կար ամերիկյան զինուժերը տեղակայելու Աֆղանստանում, Վրաստանում, Ուզբեկստանում, Տաջիկստանում<sup>16</sup>: Ի վերջո, չնայած արարողակարգային «հանդուխտություններին», Ռուսաստանը միանշանակորեն ՆԱՏՕ-ի առաջխաղացումը դեպի արևելք դիտում է որպես սպառնալիք՝ ուղղված սեփական անվտանգությանը: Հատկաճշական էր այն ձևակերպումը, որը տրվեց նախագահ Պուտինի՝ ՆԱՏՕ-ի ստամբուլյան գագաթածողովին չմասնակցելու վերաբերյալ: ՌԴ-ն արտգործնախարար Լավրովի խոսքերով՝ նախագահը չէր մասնակցում Ստամբուլի գագաթածողովին, քանի որ այլ հնարավորություններ էր ունենալու հանդիպելու աշխարհի առաջնորդներին:

Կա նաև այն կարծիքը, որ սեպտեմբերի 11-ը «երկնքից նվեր» դարձավ Միացյալ Նահանգների համար՝ գործողությունների ազատություն տալով նրան: Այդ իրադարձություններից հետո ՆԱՏՕ-ն խաղաց պետական, բայց ոչ երբեք կենտրոնական դեր: Բացի ՆԱՏՕ-ի կանոնակարգի 5-րդ հոդվածը գործի դնելուց՝ եվրոպական դաշնակիցները ԱՄՆ-ին անսահմանափակ իրավունք տվեցին իրենց տարածքով թռիչքներ իրականացնելու և լրացուցիչ ինքնաթիռներ տրամադրեցին ԱՄՆ-ի օդային տարածքը հսկելու համար: Այնպիսիքները ավելին էին: Օտտերը հույս ունեին, որ ՆԱՏՕ-ն ամբողջովին կուղղվեր նոր սպառնալիքի դեմ: Դա տեղի չունեցավ: Ընդհակառակը, հարց առաջացավ՝ արդյո՞ք ամերիկացիները երբևէ ուղղված գործակցություն կծավալե՞ն ՆԱՏՕ-ի շրջանակներում: Այժմ 5-րդ հոդվածը ընկալվում է որպես միասնականության մի հուշակագիր, որը, ի տարբերություն նախկին ժամանակների, չի ենթադրում ուժի ավտոմատ կիրառում և փաստորեն կորցրել է կենսականությունը: Սեպտեմբերի 11-ը թուլացրեց ՆԱՏՕ-ի ուղղված ճշանակությունը և մեծացրեց նրա քաղաքական դերը: Այս իմաստով սեպտեմբերի 11-ի իրադարձությունները փոխեցին միջազգային իրադրության ընկալումները՝ համենայն դեպս հարցականի տակ չդնելով Հյուսիսատլանտյան դաշինքի անհրաժեշտությունը:

<sup>15</sup> "Аргументы и факты", 2003, № 8.

<sup>16</sup> Դրա պատասխաններից մեկը կարող է տալ աշխարհաքաղաքականությունը՝ թելուրոկրատիայի և թալաստրատիայի պայքարի մասին տեսությամբ և ատլանտիստների ձգտումը՝ հաստատվելու Եվրասիայի (այն է՝ Ռուսաստանի) սահմանային գոտում, սակայն դա առանձին քննարկման առարկա է: Որպես մեկ այլ պատասխան կարելի է առանձնացնել նաև այսպես կոչված վակուումի լրացման տեսությունը:



ՆԱՏՕ-ն ավելորդություն չէ ժամանակակից աշխարհի համար: Այն կշարունակի դերակատարություն ունենալ եվրաստլանտյան անվտանգության գործում, բայց արդեն հստակորեն նոր քաղաքական իրականության պայմաններում և նոր նշանակությամբ: Այս կապակցությամբ հատկանշական է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի քաղաքական հարցերով օգնական, դեսպան Գ. Ալտենբրուգի տեսակետը. «Ռազմական առումով ՆԱՏՕ-ն պետք է գնա որոշակի վերակառուցումների ճանապարհով: Իսկ մեծաթիվ նոր անդամների ընդունումը նոր նշանակություն է հաղորդում նրան եվրոպական սահմանների ընդլայնման և անվտանգության ապահովմանը նպաստելու ոլորտներում»<sup>14</sup>: Երկուստեք պետք է մեծ գին վճարվի ՆԱՏՕ-ի և եվրաստլանտյան համագործակցության կենսունակությունն ու արդյունավետությունը պահպանելու համար:

Ամօխտելի է, որ Միացյալ Նահանգները հզորագույն տերություն է, որը առաջնակարգ դեր է խաղում համաշխարհային անվտանգության ապահովման գործում, սակայն նա չի կարող այդ բեռը միայնակ կրել: ՆԱՏՕ-ն այն բնական գործիքն է, որը պետք է իր ներդրումն ունենա այդ բարդ աշխատանքում<sup>15</sup>:

Ատոմային ուղղակի հարձակման վտանգը, որպես այդպիսին, կորցրել է իր հրատապությունը: Նոր սպառնալիքներ են երևան եկել: Դրանք արդեն ոչ թե անմիջական սպառնալիք են Արևմտյան Եվրոպայի անվտանգությանը, այլ սպառնալիք են՝ ուղղված Եվրոպայի անվտանգության որակին: Մի բան հստակ է. եթե այսօրվա գլխավոր սպառնալիքները ահաբեկչությունը և կրոնական ծայրահեղականությունն են, ապա մի քանի տարի առաջ վտանգ էին ներկայացնում հատկապես չկայացած պետությունները և էթնիկական հակամարտությունները: Այդպիսին կարող է դառնալ զանգվածային ոչնչացման զենքի տարածումը: Խնդիրն այն է, որ նոր բնույթ և սկզբնաղբյուր ունեցող սպառնալիքներ են ի հայտ գալիս, որոնք ենթադրում են դրանց արձագանքման ժամանակակից և արդյունավետ միջոցներ:

1991թ. նոյեմբերին հստակեցված ՆԱՏՕ-ի անվտանգության հայեցակարգը սահմանում էր, որ նոր անվտանգության միջավայրը բնութագրվում է ոչ միայն անմիջական սպառնալիքների առկայությամբ, այլ նաև չբացահայտված սպառնալիքներով և ռիսկայնությամբ: Ութ տարի անց վերանայված հայեցակարգը հռչակում էր, որ դաշինքը վտանգված է այնպիսի սպառնալիքներով, որոնք բազմակողմ են և հաճախ չափազանց դժվար կանխատեսելի: Դրանք ներառում են անորոշություն և անկանխատեսելիություն Եվրաստլանտյան տարածաշրջանի ներսում և նրա շրջակայքում<sup>16</sup>:

Եվրաստլանտյան համագործակցության հրամայականն այն է, որ կազմակերպությունը չվերածվի կոլեկտիվ պաշտպանության չեզոք կառույցի՝ զրկված իրական ռազմական հզորությունից և ազդեցության ներուժից: Ատլանտիկայի երկու կողմերում գտնվող իր անդամ-պետությունների ռազմական հնարավորությունները համապատասխանեցնելուն զուգահեռ՝ դաշինքը պետք է զբաղվի անվտանգության ապահովման նոր մեխանիզմների մշակմամբ Եվրոպայի սահմաններում և դրանցից դուրս: ՆԱՏՕ-ն չի կարող դիմակայել նոր սպառնալիքների, եթե մնա այն կառույցը, որը նպատակ ունի պաշտպանել միայն իր անդամների սահմանները: Այն չի կարող վերածվել գլոբալ դաշինքի, սակայն պետք է կառուցողական քաղաքականություն վարի այլ տարածաշրջաններում, ավելի լայն շրջանակով՝ անվտանգության և պաշտպանության ոլորտում ընդհանուր չափանիշների մշակման նպատակով: Ըստ էության այսօր դաշինքը գտնվում է այդ ամենի որոնման ճանապարհին: Ակնհայտորեն ՆԱՏՕ-ն փորձում է չեզոքացնել ուժերի հավասարակշռության այն տրամաբանությունը, որը իմաստագրվում է դաշինքի գոյությունը հակառակորդին հակակշռելու անհրաժեշտության բացակայության պայմաններում:

<sup>14</sup> "Internationale Politic". 06/2002, p. 83.

<sup>15</sup> Տե՛ս "Cooperative security: New horizons for international order". The Marshall Center, papers № 3, 2002:

<sup>16</sup> Տե՛ս "Globalization and Insecurity in the Twenty-first Century: NATO and the Management of Risk". The International Institute for Strategic Studies, Adelphi Paper 345, Christofer Coker, Oxford University Press, New York, US, 2002, էջ 72:



ՆԱՏՕ-ն կարող է իրապես «պահանջարկ» ունենալ, եթե կյանքի կոչի արագ արձագանքման ուժերի (NATO Response Force/NRF) զաղափարը: Ուժեր, որոնց ճկունությունը, արագությունն ու բազմաֆունկցիոնալությունը հնարավորություն կտան արձագանքելու տարաբնույթ ճգնաժամերի\*։ Այդ ուժերի ստեղծումը դաշինքի համար կարող է դառնալ այն շարժիչը, որի օգնությամբ ՆԱՏՕ-ն կիրագործի իր վերափոխման երկարատև գործընթացը՝ նախապատրաստվելով XXI դարի անվտանգությանն ու կայունությանը սպառնացող վտանգներին: Արագ արձագանքման ուժերի իմաստը մեկ միասնական հրամանատարության ներքո ցամաքային, ծովային և օդային շարժունակ միավորումների կենտրոնացումն է, որը շատ կարճ ժամանակում հնարավոր լինի գործի դնել Հյուսիսատլանտյան խորհրդի պահանջով: Դաշինքին բնորոշ է եղել իր ունեցած միջոցների միմյանցից անկախ օգտագործման գործելաոճը, որը պայմանավորված էր սառը պատերազմի հրամայականներով:

Ներկայումս նոր էջ է բացվում ՆԱՏՕ-ի պատմության մեջ. ենթադրվում է դաշինքի ռազմական և քաղաքական կառույցների վերափոխում և միմյանց համապատասխանեցում: Այդ բարդ գործընթացը համապատասխանաբար կունենա իր տրամաբանությունն ու զարգացման առանձնահատկությունները:

**Դ. Ա. ԱՄԲԱՐՅԱՆ - Կ Վոպրոսու օ նынешних тенденциях Евроатлантического сообщества.** - В статье рассматриваются некоторые черты во взаимоотношениях союзников по НАТО, проявившиеся в преддверии XXI века и особенно после 11 сентября 2001 г. Точки зрения союзников начали расходиться по поводу мер и средств борьбы с терроризмом, а также по поводу роли НАТО в этом деле.

Сотрудничество в рамках Евроатлантического сообщества изменяется под воздействием многочисленных объективных и субъективных факторов, отражаясь и на тенденциях изменения облика НАТО. Североатлантический Альянс является структурным и функциональным отображением этого сотрудничества и находится в стадии трансформации и приобретения нового качества. Отмечаются некоторые поводы для разногласий в Европе, и в частности в ЕС, о приобретении идентичной европейской оборонной составляющей. НАТО рассматривается как необходимый инструмент, нуждающийся, однако, в коренных изменениях. Определяются некоторые факторы, которые уже влияют на трансформацию альянса и во многом будут воздействовать на его дальнейшее развитие.

---

\* «Rapid reaction NATO Response Force» ծրագրի իրականացումն սկսվեց 2003 թ. հոկտեմբերին: Ծրագրի շրջանակում գինվորների թվաքանակը մինչև 2006 թ. պետք է հասցվի 21.000-ի: